ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՎԵՑ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՌԸ

Հոկտեմբերի 4-ին Ն.Ս.Օ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Արագածոտնի թեմի Ագարակ գյուղի նորակառույց Սուրբ Աստվածածին մատուռը, որը կառուցվել է Հրաչ Պողոսյանի և նրա ընտանիքի բարերարությամբ:

Գյուղի բնակչությունը մեծ խանդավառությամբ և աղուհացով դիմավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Այնուհետև «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ, հոգևորականների հանդիսավոր թափորով ու բազմաթիվ հավատացյալ հայորդիների ուղեկցությամբ Նորին Սրբությունը մուտք գործեց նորակառույց մատուռ: Շարականների երգեցողության և սաղմոսերգության ներքո գինով լվացվեց Սուրբ Սեղանը, որից հետո Վեհափառ Հայրապետը նորօրհնյալ Սրբալույս Մյուռոնով օծեց մատուռի Սուրբ Սեղանն ու Մկրտության Ավազանը:

Արարողության ավարտին Ն.Ս.Օ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր Հայրապետական օրհնությունն ու բարձր գնահատանքը բերեց Հրաչյա Պողոսյանին և իր ընտանիքի անդամներին, ովքեր սիրահոժար կերպով և իրենց արդար վաստակով կառուցել են Սուրբ Աստվածածնի անունը կրող սրբազան մատուռը: Այնուհետև Ագարակ գյուղի բնակչությանն ուղղված իր օրհնության խոսքում Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ նորօրհնյալ Մյուռոնի անուշաբույրը տարածվի ողջ գյուղում, Սուրբ Հոգու շնորհներն իջնեն գյուղի յուրաքանչյուր անդամի վրա և շնորհազարդեն նրանց կյանքի գեղեցկությամբ, ավետարանական նվիրական արժեքներով, որպեսզի ծաղկի ու առաջընթաց ապրի գյուղը և բարօր դառնա գյուղի յուրաքանչյուր բնակչի կյանքը:

«*Ցնծացե՛ք և ուրա՛խ եղեք այսօրվա ուրախությամբ, որովհետև այս մատուռը պիտի դեպի երկինք բարձրացնի ձեր աղոթքը, ձեր հայցը, ձեր ուխտը, և Աստված՝ ունկնդիր ձեր խնդրանքներին, պիտի բազմապատիկ վարձատրի ձեզ, օրհնի ձեզ, ձեր բարի կյանքը և ձեր հավատո բարի գործերը: Ուրեմն մնացեք Աստծո սիրո մեջ, քայլեք Աստծո պատվիրանների ճանապարհներով, որպեսզի Աստծո օրհնությունը միշտ ուղեկից լինի ձեր կյանքին*»,- պատգամեց Վեհափառ Հայրապետը:

Մատուռի օծումից հետո նորաօծ մատուռում կատարվեցին Մկրտության և Պսակի առաջին սրբազան արարողությունները: Վերջում մատուռին կից բակում գեղարվեստական կատարումներով հանդես եկան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Նորքի Հայորդյաց տան սաները:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը և Մայր Աթոռի միաբաններ: Արարողությանը ներկա էին Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանը, Աշտարակի քաղաքապետ Գագիկ Թամազյանը և մարզային իշխանությունների այլ ներկայացուցիչներ:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ